իշխան ընդառաջ կելնէ, լեռնցի մարդուն ձեռքերը կը բռնե… հին բարեկամ եղած իրարու Յովնան, Գուրգէն, իբրեւ թէ եղբօր զաւկներ լինէին… Անիծա՛ծ կենդանի, աղիքներս վեր, վար դարձաւ… իմ պատուակա՜ն ձին, տես ինչպէ՛ս լաւ կ'երթայ Ցոլակին հետ… բայց դոքա ի՞նչ կը խօսին, մենք ո՞ւր կ'երթանք, այս ճանապարհը դեռ ինչչա՞փ կը քշէ, ասոնք ամէնը խնդիր են, բայց ո՞ւմ հարցնես: Իրաւ որ Վահրի՛ճ, դու մեծ յիմարութիւն ըրիր՝ թողիր տուն տեղ ելար իշխանին ետեւեն… բայց միթէ գիտէի թէ զիս այսպէս պիտի ընդունի. ոչ ընտանութիւն, ո՛չ՝ ի՞նչ ըրիր, ո՛չ՝ ընտանիքդ ինչպէ՞ս են, ոչինչ հարցմունք չի կայ, այլ միայն «բարի ես եկեր» մը եւ ետքը գնա այդ կախարդը փնտրէ, տո՛ւր ձիդ որ վեցհազարեայի մարդը նստի, եւ դու հեծի՛ր վայրենի կենդանուոյն վրայ, որ բոլոր աղիքներդ վեր, վար շրջէ եւ զքեզ սպաննէ:

Եւ յանկարծ այս ամէն խորհրդածութիւնք ընդհատեցան, Բագարան եւ իր կ'աթողիկէին ստուերը երեւցաւ մութուն մէջ եւ մեր երկու ձիաւորք կ'եցան եւ իջան ձիերնեն. Վահրիճ իջաւ նոյնպէս եւ կաղնիկաղ ամենաթթու կերպարանքով եկաւ ձիերը առնլու: — Դու այս աղբիւրին քով մեզ սպասէ,— ըսաւ Գուրգէն, առանց գլուխ անգամ դարձնելու Վահրիճի տխուր երեսին, որ արդէն տեսնել կարելի չէր մութուն պատճառաւ, եւ շարունակելով Յովնանու հետ իւր ճամփան դէպի քաղաք: Թէպէտ դժգոհ, որ այս արշաւանքեն բան մը չիմացաւ, թէպէտ զկծեալ, որ զինք քաղաք մտնելու արժանի չէր համարէր իշխանը՝ բայց մխիթար եալ, որ ազատեցաւ ցնցմունքէ եւ ոսկորներու ցաւէ, կապեց երկու ձին ծառի մը, Ցոլակին էլ ապսպրեց հսկել եւ ինք վերարկուին փաթաթեալ երջանիկ քունի մը մէջ ընկղմեց աւ: Խեղճ Վահրիճ հազիւ թէ քառորդ մը կրցաւ քնանալ եւ ահա զգաց տաք շունչ մը եւ երկու ահագին շրթունք իւր երեսը կը գգուէին, Ցոլակ իրեն իմաց կ'ուտար. ցատկեց ելաւ, եւ կը լսէր քանի մը հեծելոց, ոտից դոփիւն. կորովաբար իւր երկու ոտքին վրայ, հաստատուն կանգնեցաւ, եւ կրցաւ որոշել, որ իշխանական խումբ մ’էր, որ կ'անցնէր. դարձեալ առաջին դիրքը առաւ, իր քարէ բարձին վրայ սկսաւ քնանալ, բայց հազիւ աչքերը կը գոցեր՝ Ցոլակ հաւատարիմ պահապան զինք կ'արթնցնէր: Երկու-երէք անգամ նոյն